Ամենապատուեցեալոյ և ի սրտէ սիրեցելւոյ տեառն մերոյ Մխիթարայ աստուածաբանութեան վարդապետի, և աբբայ հօր ձօնեցի ողջոյն սիրալրական բազմաւ խոնարհութեամբ և գրկախառն համբուրիւ։

. . . . Ընդ սմին և յայտարարութիւն լիցի թէ քանի մի տարի եղև, որ եկն աստ ի գաղատիոյ Էնկուրիէն կոյս ոմն Էզիզ կոչեցեալ, և մինչ ժամանակ ինչ եկաց աստ, մեր գերազանցագունեղ դեսպանն քրիստոնէագունեղ արքային յղեաց զնա ի յերկիրն իւր առ կալլիայ ի վանքն կուսանաց։ Յետ այսորիկ մինչ ես առնէի ըստ վաղեմի սովորութեան իմոյ երթ[և]եկցութիւն առ այս գերազանցագունեղ դեսպանս, նայ բազմիցս վիպէր ուրախօրէն զլուրս նորին, և զքարտէզս որք գային ի նմանէ ցուցանէր գովաբանելով։ Բայց մերձակա[յ] ժամանակիս յաւուր միում մինչ եղէ առ այս գերազանցագունեղս, նա եցոյց, և ընթերցաւ առաջի իմ զքարտէզ իմն յոյժ երկար, որ պարունակէր զպատմութիւնն այն Էզիզին։ Որպէս տեսանելոց էք զհամառօտութիւնն նորին ընդ այսմիկ, զորս գրեալ էր ոմն ազնուական կալլիացի առ դեսպանն, զորս հրամայեաց ինձ թարգմանել զնա, և ուղարկել առ Էնկուրի ծնօղի, և ազգականաց Էզիզին։ Իսկ մեք մինչ ընդ դեսպանին էաք նայսմիկ զրութեան՝ եկն ոմն վանատիկցի ծանօթ նոյնոյ դեսպանին, և վաղեմի բարեկամ իմ։ Սա յորդորեաց զիս, զի ուղարկիցէի ևս զմինն ի յօրինակացն պատմութեան մեծութեան ձերոյ, և ես խոստացայ առաջի դեսպանին առնել յօժարօրէն։ Վասն որոյ զմինն ի յօրինակաց եդի նայսմիկ քարտիզի, զի ընթեռնլով զսայ տեսանիցէք թէ այս գերազանցագունեղս մեր որքան բարութեանց պատճառ եղև այսմիկ ազգկան։ Շնորհ արա՛ ծանուցանել մեզ զժամանելն սոցայ ընդ որպիսութեանց ձերոց, զորս բաղձամ իմանալ, քանզի սիրեմ ճշմարտութեամբ։ Եղբայրն ձեր տիրացու Յովսէփն վաղուց տեղս է։ Եւ մերձակայ աւուրս եկն ի սեփաստիոյ տիրացու պապ աղան քվեր որդին ձեր, որք ողջունեն զձեզ մեծաւ խոնարհութեամբ և սիրով, և համբուրեն զսրբասնեալ աչն ձեր...։

Պատրաստական և ջերմեռանդ ծառայ
Մինաս վարդապետ
միսսիոնար առաքելական

Պէկ Օղլուն Բուզանդիոյ
1737 Ապրիլի 16

ԿԷ.

Վերնագիր չունի վաւերաթուղթս. կը հասկցուի սակայն առ Մխիթար գրուած ըլլալը։

« Գրիգոր Երուսաղէմայ պատրիարք » (1717–1749) և «Յոհաննէս վարդապետ», յետոյ նաև պատրիարգ Կ. Պոլսոյ (1715–1741), մեր ազգային պատմութեան մէջ կարկառուն դէմքեր են. առաջինը Շղրայակիր և երկրորդը Կորտ կը կոչուի. երկուքն ալ կարևոր դերեր ունեցած են ազգիս մէջ։ Մեր նամակին մէջ անհարկի շեշտուած չէ այն մտերմական կապը՝ զոր կ՝արտայայտէ Գրիգոր Յովհաննու մասին. « Երկոքին սոքա Գրիգոր և Յովհաննէս էին աշակերտեալք Վարդանայ վարդապետի՝ առաջնորդի վանացն ամրդոլու՝ որ ի Բաղէշ. յորմէ երկոքին ևս կոչեցան բաղիշեցի[1] »։

Յովհաննու մասին յատկապէս մէջ կը բերենք յիշատակութիւն մը. սա տեսնելով Մխիթարայ Մատթէի մեկնութիւնը, որ դեռ նոր հրատարակուեր էր, մեծապէս կ՝ուրախանայ, ու մինչև անգամ եկեղեցւոյ բեմէն իր քարոզին մէջ գովասանքով կ՝ըսէ. « Լոյս մեծ ծագեաց այսօր եկեղեցւոյս հայոց. զանձ տուաւ յԱստուծոյ գիրքս այս »[2]։

Հ. Պօղոս կը նկարագրէ յետոյ շքեղ թափօր մը, որուն կը մասնակցին հայք,

1. Չամչեան, Պատմ. Հայոց. Հատ. Գ. էջ 770։
2. Անդ, էջ 775։